ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
Shirak Centre of Armenological Studies NAS RA

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ НАУЧНЫЕ ТРУДЫ SCIENTIFIC WORKS

ՀԱՏՈՐ ВЫПУСК EDITION 28 2025 № 1

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ETHNOGRAPHY

ՀՏԴ՝ 39
DOI: 10.52971/18294316-2025.28.1-128

ԿԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

Հասմիկ Թ. Հարությունյան
Երևանի պետական համալսարան, ՀՀ

Ամփոփում
Նախաբան. Մշակույթի ամենատարբեր ոլորտներում դրսևորվող հավատալիքները մարդկության մշտական ուղեկիցն են: Անասնապահական տնտեսաձև վարող ժողովուրդների մշակույթում դրանք հիմնականում կապված են խոշոր եղջերավոր անասունների և հատկապես կաթնատնտեսության հետ: Տնտեսության այս ճյուղն ավանդաբար կարևոր և պատվավոր տեղ է ունեցել նաև նստակյաց, երկրագործ ժողովուրդների, այդ թվում՝ հայերի արտադրական մշակույթում, և պատահական չէ, որ հայերի հավատալիքային համակարգում մինչ օրս ուրույն տեղ ունեն տնտեսության այս բնագավառի շուրջ ձևավորված պատկերացումները: *Մեթոդներ և նյութեր.* Դաշտային նորօրյա նյութերը պատմահամեմատական մեթոդի սկզբունքով համադրվել են ազգագրական, գեղարվեստական գրականության մեջ, բանահյուսական նմուշներում, արխիվային նյութերում հայթայթած և ի մի բերված՝ թեմային վերաբերող հիշատակությունների հետ: Դաշտային աշխատանքի ընթացքում կիրառվել է խորացված հարցազրույցի մեթոդը: *Վերլուծություն.* Քննարկվել են կաթնատնտեսության հետ կապված տարաբնույթ հավատալիքներ, դրանք դիտարկվել են Կովկասի ժողովուրդների հավատալիքների համեմատական լույսի ներքո, ներկայացվել են բանահյուսական նմուշներ, որոնցում դրսևորված են կաթնատնտեսության շուրջ ձևավորված պատկերացումները: *Արդյունքներ.* Կաթնատնտեսության հետ կապված հավատալիքներում միահյուսված են հայոց և՛ հեթանոսական, և՛ քրիստոնեական պատկերացումները: Օջախի առատությունն ու լիությունը՝ *բարաքյաթը* պահպանելու, այդ թվում՝ կաթն ու կաթնամթերքն անպակաս պահելու համար մարդիկ դիմել և դիմում են հմայական զանազան միջոցների: *Չար աչքը խափանելուն* ուղղված ժողովրդական միջոցները կարելի է դասել երկու խմբի՝ կանխարգելող և վնասազերծող:

Բանալի բառեր՝ *հավատալիք, կաթնամթերք, արտադրական մշակույթ, լիություն-առատություն, հմայություն, դաշտային նյութեր, բանահյուսական նմուշներ:*
Ինչպես հղել՝ Հարությունյան Հ. *Կաթնատնտեսության հետ կապված հավատալիքները հայոց մեջ* // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի: 2025: Հ.1(28): 128-139 էջեր: DOI: 10.52971/18294316-2025.28.1-128

BELIEFS RELATED TO DAIRYING IN THE ARMENIAN CULTURE

Hasmik T. Harutyunyan
Yerevan State University, RA

Abstract
Introductoin: Beliefs, manifested in the most diverse spheres of culture, are a constant companion of mankind. In the culture of cattle-breeding peoples, they are mainly associated with cattle and especially dairying. This branch of the economy has traditionally had an important and honourable place in the industrial culture of sedentary, agricultural peoples, including Armenians. *Methods and materials:* According to the principle of historical-comparative method, modern field materials were combined with references on the topic found in ethnographic literature, fiction, folklore samples, archival materials. In-depth interview method was used during the field work. *Analysis:* We have discussed various beliefs related to dairying, considered them in the comparative light similar with beliefs of the Caucasus peoples', we have presented folklore samples in which the ideas formed around dairying are manifested. *Results:* Both pagan and Christian ideas of the Armenians are intertwined in the beliefs related to dairying. In order to preserve the abundance of the family, including milk and dairy products, various magical means were/are resorted to. Folk remedies for the evil eye can be divided into two groups: preventive and rendering harmless.
Key words: *belief, dairying, industrial culture, abundance, witchcraft, field materials, folklore samples.*
Citation: Harutyunyan H. *Beliefs Related to Dairying in the Armenian Culture* // "Scientific Works" of SCAS NAS of RA. Gyumri. 2025. 1(28).128-139 pp..
DOI: 10.52971/18294316-2025.28.1-128

ՆԱԽԱԲԱՆ. Հայ ժողովրդական հավատալիքների՝ սնահավատությունների, նախապաշարումների, հմայական, չարի ու բարու մասին պատկերացումների մի ստվար հատված վերաբերում է ընտանի կենդանիներին, դրանց խնամքին, կաթի ստացման ու մշակման գործընթացին:

Մեր նպատակն է՝ բացահայտել կաթնատնտեսությանն առնչվող ժողովրդական հավատալիքները, դրանց երևան գալու հիմքերը, մինչ օրս գոյության հիմնական պատճառները, ժողովրդական բացատրությունները, կենցաղավարման տարածաշրջաններն ու ակտիվությունը:

Այնքան ժամանակ, քանի դեռ նույնիսկ մենք՝ կրթված աշխարհիկ-աթեիստներս, կա՛մ պարզապես *իներցիայի ուժով*, կա՛մ լավ մակարդվելու, կա'մ էլ այլ նպատա-

կով մածուն մերում ենք *խաչ անելով*, կաթնատնտեսության հետ կապված հավատալիքների ուսումնասիրությունը մնում է արդիական:

Աշխատանքի նորույթը դաշտային նորօրյա նյութերի գիտական շրջանառության մեջ դնելն է՝ տարաբնույթ վկայությունների համադրությամբ:

***Չար աչքի* մասին ժողովրդական պատկերացումները**

Հայոց բոլոր պատմազգագրական մարզերում մեծ երկյուղ են ունեցել *չար աչքի* նկատմամբ: Հավատացել են, որ ինչպես մարդիկ, այնպես էլ նրանց կենսագործունեության բոլոր ոլորտներն ու ստեղծած բարիքները, այդ թվում՝ կաթնատու կենդանիները, կաթը, կաթնամթերքը, խնոցին, ենթակա են *չար աչքի՝ նիաթի* (*նիյէթ՝* դիտավորություն, նպատակ)[1, էջ 256]: *Չար աչքի* ազդեցությունից առավել խոցելի են համարվել սովորականից տարբերվողները. ընտրյալները, գեղեցիկները՝ ուժեղ եզներն ու գոմեշները, մեծ կուրծք ունեցող կաթնատու կովերը: Այսօր էլ վստահ են, որ *աչք առած կթանի կուրծն ուռչում է*, կաթն էլ տհաճ համ է ունենում[26, էջ 143: Նասիբյան Ժուլետա, Տավուշ, Կողբ, 21.09.2024]: Ժողովրդի պատկերացմամբ՝ *չար աչքի* զորությամբ կովը կարող է *ցամաքել*, կաթը *կտրվել, յուղ դուրս չգալ խնոցուց* [3, էջ 90]: Չարաճճի հարսի համոզմամբ՝

…Խանըմ կիսուր եկավ,

Ծծում աչքի եկավ.

Եղ խալավ, թան տառավ…[23, էջ 204]:

Չար աչքին դիմակայելու համար կարևոր էր հասկանալ, թե ումի՛ց և ինչի՛ց պետք է զգուշանալ: Եթե կթելիս մեկը մտնի, և կաթը քիչ կթվի՝ նա կդիտվի *ծանր ոտ ունեցող* [19, էջեր 311-312: 7, էջ 22]: Նրա դուրս գալուց հետո տանտիկինը երեք անգամ թքում է գետնին կամ *բաբա է չափում(մատները լայն բացած ափը պարզել մեկի մեջքին, չանչել, չանչ անել)*՝ անիծելով. «*չոռը քեզ», «օձն հետևդ»* [Սարգսյան Ժենյա, Գեղարքունիք, Արծվանիստ, 02.03. 2019]: Եթե կասկածել են, թե ում *աչքից* է կաթը պակասել կամ արյունախառն կթվել, կրակից հանել են թեժ վառվող 3-4 ածուխ, գցել ջրի մեջ ու յոթ անգամ կրկնել կասկածելի մարդու անունը. եթե ածուխն իջներ ջրի հատակը, նա էր *աչքով տվողը*, եթե ոչ, գործողությունը կրկնել են՝ այլ մարդկանց անուններ տալով [10, էջ 147]: *Չար աչքը խափանելու* համար մինչ օրս դիմում են բազմաթիվ միջոցների: Դրանց մի խումբը կանխարգելող է՝ ուղղված *չար աչքից* խուսափելուն, *չարի ուժը* նախապես չեզոքացնելուն:

Կանխարգելող միջոցներ

Գարնանը՝ առաջին անգամ գոմից հանելիս, անասունի ճակատին ձու են ջարդել՝ նմանողական հմայությամբ նույնացնելով *աչքը պայթելու* (*տրաքելու*) հետ: Որպեսզի «*հարքին(խնոցի հարելուն) աչքով չտան, նազար չդիպչի*, խնոցուց կախել են ոզնու փուշ, կրիայի պատյան, օձի շապիկ, փուշ, ավանակի պայտ, մեխ, փիրուզագույն կամ կապույտ ուլունք, մոլլայի պատրաստած հմայիլ [2, էջեր 67-68: 4, էջ 67: 15, էջ 111: 35, էջեր 133, 71: 20, էջ 154], որոնք աշխատել են ձեռք բերել հատկապես Համբարձման տոնի նախօրեին[1]: Կթող կինը, որպես պահպանակ՝ մատանի է կրել, որ կովի կաթը

[1] Կաթնատնտեսության, առավելապես յուղի առատության ապահովմանն ուղղված հավատալիքները հրաշալիորեն դրսևորվել են հատկապես Համբարձման տոնի օրը և նախորդ գիշերը. դրանք մանրամասնել ենք առանձին հոդվածում (-հեղ.):

չպակասի, կուրծքը *չՀաքի* [28, էջ 149]: Սասունցիները ուխտավայրերից բերած հողը աղի հետ տվել են անասուններին, որպեսզի *չարը նրանց չկպչի* [30, էջ 300]:

Ազգագրական դիտարկումները ցույց են տալիս, որ որոշ աշխատանքներ չեն ձեռնարկել ոչ միայն օտար, այլև *ծանր ոտ, չար աչք* ունեցողի համբավ ձեռք բերած մարդկանց ներկայությանբ. խուսափել են կով կթել, խնոցի հարել, խնոցուց կարագը դատարկել, կաթի ճիշտ քանակը ասել [20, էջեր 311-312: 7, էջ 22: 5, էջ 65: 6, էջ 69]: Անգամ, երբ կովի կաթն առատ է եղել, և մի մասը կարելի էր զտել (օրինակ՝ յուղի կարիքը հոգալու համար), բայց քամիչ մեքենա չեն ունեցել, նախընտրել են ամբողջը պանիր պատրաստել իրենց տանը, քան քամիչ ունեցող հարևանի տուն տանել, որ *աչքով չտան*: Զգուշացել են. եթե յուղ հալելիս *գեշ աչք ունեցող* գա, յուղի զնդանը *չախալմիշ կլինի* (չաթլամիշ ըլլալ՝ ճեղքուիլ, ճաթիլ) [1, էջ 265: 27, էջեր 198-199] կամ կարագը կդառնանա [Կողբ, 2024]:

Օջախի վրա կաթ եփելիս ուրիշին կրակ չեն տվել. կովը *կակնըռե, աչքի կգա*, կաթը *կփսորի* (*կկտրվի, կշաղվի*), կովի պտուկն էլ *կքոսոտի:* Եթե նոր ծնած կովի կաթը տանից դուրս են հանել երեկոյան, մեջը *քերիջ* (հացի այրված կտոր) կամ վառվող ածուխ են գցել, որ կովը *չակնըռե* [28, էջեր 116-117, 12, էջ 325]:

Սասունում հուլիսի առաջին օրերին գոմերի մսուրքների մեջ, *տկերի* (խնոցու) տակ փշոտ *գ(կ)ազ* կոչվող թփեր են վառել, դրա կրակով տաքացրել նաև *թացանի* (կաթնամթերքի) ամանները [31, էջ 116: 6, էջ 69]: Հավատացել են՝ չարին կհաղթեն *երկընքից իջած մանանայի* (այդ սեզոնին որոշ բույսերի, նաև *գազի* տերևներին երեկոյան ժամերին նստած սպիտակ, քաղցրահամ փոշի), դրանով պատված բույսի փշի ու կրակի միասնության ուժով:

Կաթը քաշելու ժամանակ (պանիր պատրաստելու ընթացքը- Հ.Հ.) մոխրով *խաչ են արել* կաթսայի վրա [Հովհաննիսյան Աննա, Արագածոտն, Նորաշեն, 13.11.2023], մինչ օրս շատ տնտեսուհիներ մակարդված կաթը ձեռքով կամ դանակով խաչաձև են կտրում [Պողոսյան Սուսաննա, Գեղարքունիք, Աստղաձոր, 20.10.2023]:

Հայոց որոշ տարածաշրջաններում այսօր էլ հավատում են, որ չար աչքից ամենախոցելի կաթնամթերքը *դալն է*[2], ուստի այն պատրաստել են գրեթե գաղտնի, չեն հայտնել անգամ մերձավորներին: Խուսափել են տաք *դալը* կտրել՝ *գդալ խփել,* հավատալով, որ կովը կչարանա, կցամաքի: *Դալ* եփելիս կաթսայի մեջ գցել են կապույտ թել ու ասեղ՝ հավատալով կապույտի չարխափան զորությանը[3], կամ գարու հատիկներ՝ որպես առատության խորհրդանիշ, որոշ բանասացների բացատրությամբ՝ գարու *փշոտ* արտաքին մակերեսի *չար աչքը* վանող հատկության համար. հանել են հաջորդ օրը, *դալն* ուտելուց առաջ [Հայրապետյան Հասմիկ, Արագածոտն, Եղիպատրուշ, 14.12.2023]: Հավանաբար որպես մատաղ՝ *դալը* բաժանում են յոթ տան: Հարևանները *դալի* ամանը վերադարձնում են անլվա, շուռ տված, վրան աղ լցրած, քանզի աղին վերագրվում է չարը չեզոքացնելու հատկություն [26, էջեր 145, 146: Արծվանիստ 2019: Հովակիմյան Անժելա, Գեղարքունիք,

[2] Նոր ծնած կովի առաջին օրերի կաթը եփելուց առաջացած թանձր զանգվածը հայոց տարբեր տարածաշրջաններում հայտնի է *դալ* կամ *խիժ* (խեժ) անունով:

[3] Ուշագրավ է, որ որոշ տնեսուհիների բացատրությամբ՝ թել դնելն ունի *դալի* ծակոտկենությունն ապահովելու միտում [Աստղաձոր 2023]:

Գեղամավան, 12.12.2023]: Ի տարբերություն որոշ տարածաշրջանների, որտեղ մինչ օրս էլ աշխատում են գաղտնի եփել *դալը*՝ Քեսապում, ընդհակառակը, *դալը* բաժանել են դրացիներին, որ կաթը առատ լիներ, դա չանելը մեղք է համարվել [29,էջ 81]:

Հատկապես ծնի սեզոնին, գարնանը, երբ անասուններն արոտ են գնացել, որևէ կաթնամթերք ուրիշի չեն տվել՝ «գարուն-գարնանոցով մեր *մարագեն չաչկռի*» պատկերացմամբ՝ տնտեսական տարվա առաջին օրերի հետ կապված նմանողական հմայությամբ պայմանավորված [Արծվանիստ 2019]:

Հայոց հավատալիքներում հմայական նպատակներով ավանդաբար լայն կիրառություն են ունեցել հատկապես երկաթյա իրերը և որոշ բույսեր: *Չար աչքը* չեզոքացնելու համար *դաղած* երկաթը մտցրել են կաթի, երեքնուկը՝ պանրի *մայայի* (մակարդի) մեջ [Եղիպատրուշ 2023: Արծվանիստ 2019]: Որպեսզի կաթը *չկտրվի*, կրակի մեջ, որի վրա այն եռացրել են, այրել են Ծաղկազարդի օրը եկեղեցում օրհնած ուռենու ճյուղ[19, էջ 71]՝ ապավինելով ոչ միայն ճյուղի, այլև օրհնանքի զորությանը:

Վնասազերծող միջոցներ

Երբ կանխարգելող միջոցները, այնուամենայնիվ, չեն արդարացրել հույսերը, չարի պատճառած վնասներից ազատվելու նպատակով դիմել են այլ միջոցների. *աչքով տված* կասկածելի մարդու անունը գրել են աղոթած թղթի վրա, այն այրել, տարել *նիաթի* եկած կովի մոտ, որպեսզի *հոտը քաշի*, որից հետո մոխիրը լցրել են հարդի վրա ու տվել կովին՝ ուտելու: Երբեմն աղոթած թուղթը 40 օր կովի ճակատին կապած մնալուց հետո հանել են, գցել գետը [Արծվանիստ 2019]: Եթե կովը ջերմել է (կուրծը տաք է եղել), պտուկը *ճաքել է*, հավատացել են, որ կենդանուն *աչքով են տվել*[4], բուժելու համար *արաժան* կամ վազելին են քսել: «Էտ կովի կաթը կովի գլխին վեր ենք ածում մի երկու անգամ, հետո խոզին ենք տալի»: Կովի *կուրացած* (*ճաքած*) պտուկներին կապել են դեռահաս օրիորդի՝ կույս աղջկա ներքնազգեստ: Համշենում *աչկնըռած* կովին լավացնելու համար օջախի շղթան և մի *խանձող* (այրված փայտ) երեք անգամ մտցրել են սառը ջրի մեջ, ապա ջուրը տվել կովին խմելու [Արծվանիստ 2019: 28, էջ 129]:

Երբ կովերի կաթը նվազել է կամ խնոցուց քիչ է կարագ դուրս եկել, փորձառու տանտիկինները տան երդիկի *ափին լեպ*՝ կախարդական *գիր-փիթիկ* են փնտրել, քանզի ժողովրդական ընկալումներում երդիկը բնակարանի սրբազան հատվածներից մեկն է, և չարակամները հաճախ երդիկից են փորձել իրականացնել իրենց նպատակները: Համոզված են եղել, որ գտնելու և այրելու դեպքում կովերը դարձյալ սովորական չափով կաթ կտան[27, էջ 236]: Եթե կովի կաթը արյունախառն է եղել, լավացնելու հույսով, առանց այդ մասին մեկին ասելու, անխոս կթել են, կաթը թափել թոնրի կամ աղբյուրի ակի մեջ, մեր օրերում՝ փշոտ բույսի, մասրենու ճյուղերին՝ *չար աչքը ծակելու* համար [Նորաշեն 2023], ոմանք՝ իրենց *դրինդը* (բոի փափուկ մասը) և ապա կովի պտուկը երեք անգամ կծելով: Նույն նպատակով հացի վրա աղ են ցանել, աղոթելու տվել, կեսը շանը,

[4] Կովի պտուկը *ճաքելու* պատճառ համարել են նաև հարսի անառակությունը: Հավատացել են, որ կովի պտուկը կարող է *ուռչել*, եթե երեխաները կանաչ սոխի անցքով փչեն, ուստի արգելել են դա անել: Մեր օրերում էլ, երբ երեխաները *մասրենուց* շվի են պատրաստում կամ դաշտային *դանդելիոն, դեղին ծաղկի* ցողունը, գլխիկից առանձնացնելով, փչում են, մեծերն արգելում են [Արծվանիստ 2019]:

կեսն էլ կովին տվել ուտելու: Երբ կաթի յուղային մասը պակասել է, լավ չի հարվել, մի ձու են աղոթելու տվել և տան կտուրում պահել [12, էջ 236: 15, էջ 110]: Երբ *չար աչքից* կաթը թթու համ է ստանում, մեղրաջուր են տալիս կովին, հավատալով, որ կաթը կքաղցրանա [Կիրակոսյան Պայծառ, Արարատ, Նորաբաց, 13.10.2023]:

Բարաքյաթը **պահպանող միջոցներ**

Օջախի *բարաքյաթը*, այդ թվում՝ կաթն ու կաթնամթերքն անպակաս պահելու համար ժողովուրդը դիմել է հմայական զանազան միջոցների[5]:

Տարվա մեջ որոշակի օրերի հոգևորականներին օրհնել են տվել բոլոր բարիքները, նաև կաթնամթերքը: Հնուց ավանդած փորձով ինչպես կենսական մյուս բարիքները, կաթնամթերքը ևս փոխարինաբար տալիս ամանը լրիվ չեն դատարկել, մի քիչ թողել են, որ *բարաքյաթը* մնա տանը, տալուց առաջ այն գաղտնի խաչակնքել են, աննշան աղ լցրել վրան:

Պանրի կտորներն ամանի մեջ դասավորելիս սկզբից մի մեծ կտորի վրա *խաչ են արել* և առաջինն այն դրել ամանի մեջ, որ *սատանան բարաքյաթը չտանի*[6]: Նույն նպատակով խնոցին *փոխ տալիս* մի *գրավական* են վերցրել, ցույց տալով, որ խնոցին իր տեղում է: Ծաղկազարդի ուռենու ճյուղերը, այսօր՝ նաև բողբոջները,պահել են կճուճներում, որպեսզի յուղն անպակաս լինի, սարից տուն վերադառնալիս ավելցուկ մերանը հորել են. սուրբ է՝ սուրբ մնա [24, էջեր 451-452: Արծվանիստ 2019: 3, էջ 88: 12, էջ 236: 22, էջ 273]:

Հավատացել են, որ նորը, թարմը, *նուրգարը* օջախի հաջողության գրավականն է, ուստի, այն չվտանգելու համար սկզբում կթած կաթը դուրս չեն տվել [16, էջ 247]: Քանի դեռ կաթը կրակի վրա է եղել, խիստ անհրաժեշտության դեպքում հարևանին կրակ տալուց առաջ կաթի ամանի վրա կանաչ տերև են դրել, որ *բարաքյաթը չպակսի*. այրող, ոչնչացնող տարրը՝ կրակը, փոխարինվել է թարմ, ապրող տարրով: Հում կաթը փոխ չեն տվել, անհրաժեշտության դեպքում մեջը մի կտոր ածուխ են գցել, որ կաթը չպակասեր: Ենթադրվել է, որ հում կաթի մեջ քաջքեր կան, որ դժգոհելով փոխ տալուց՝ կարող են վրեժխնդիր լինել և այն պակասեցնել[19, էջեր 311, 303: 12, էջ 235: 22, էջ 274]: Կարծում ենք՝ եռացրած կաթի՝ չարքերին դիմադրելու կարողությունը ժողովուրդը պայմանավորում է կրակից փոխանցված ուժով:

Կաթնամթերքի ամանը վերադարձնելիս՝ չեն լվացել, որ *ջուրը կաթն ու մածունը չտանի*, դատարկ չեն վերադարձրել. հարմար ոչինչ չունենալու դեպքում ջրով լի են տվել, որ հարևանի կովերն ու ոչխարները չցամաքեն [Նորաբաց 2023]: Հավատալով խոսքի ուժին՝ անպայման օրհնել են՝ *կովը կաթով ըլի*, *դռնաղը, պճեղը* (կճղակ) *պինդ ըլի* (*դաբաղ* հիվանդության նկատմամբ ունեցած վախով պայմանավորված՝ այս օրհնանքով դիմել են նաև նոր ծնված հորթին՝ բերանը մի գդալ արդար յուղ դնելով [Խաչատրյան Սուսաննա, Վայոց ձոր, Մարտիրոս, 12.12.2023]):

---

[5] Ըստ ավանդության՝ հնում կաթը եփելիս բարձրացել ու այդպես էլ մնացել, ավելացել է: Մի անգամ մի կին չի նկատել, որ բարձրացել է, և կաթը թափվել է: Զայրացած կինը թքել է կաթի վրա, որի պատճառով *բեռնքեթը* կորել է. տաքանալիս ավելանում է, սառչելիս՝ պակսում [28, էջ 129]: Ի դեպ, որոշ տնտեսուհիներ կաթը եփելիս մեջը գդալ են դնում, որ կաթը շատ չբարձրանա և թափվի [Ղարիբյան Վարդիթեր, Ճիրակ, Գառնառիճ, 10.04.2023]:

[6] Նկատենք, որ Կովկասի որոշ ժողովուրդներ առաջին գլուխը զոհաբերել են տան հովանավոր ոգուն. նշան անելով՝ դա կերել են Նոր տարվա, Մեծ պասի նախօրեին [33, էջ 141]:

Մեր օրերում ևս ընդունված է կաթնամթերքի ամանը վերադարձնել օրհնանքով՝ *մեկն խազար, չառնի նազար, ամանդ միշտ կաթ ըլնի*: [20, էջ 147: 6, էջ 70: 36, էջ 37: 21, էջ 215: Արծվանիստ 2019: Նորաբաց 2023]

Դատարկ ամանը ձեռքին կովի մոտ չեն քայլել, որ կուրծքը չդատարկվեր, կովերին հեռու են պահել կրակից, որ *չչորանար*՝ չցամաքեր: Արգելվել է մածնով և կաթով կրակ հանգցնելը. մածունը կամ կաթը կրակի վրա թափելով և գոլորշիացնելով՝ կարող էին պակասեցնել դրանց առատությունը[19, էջեր 153, 311, 312]: Զատկից մինչև Համբարձում կաթնապուր չեն եփել, կաթ և մերան չեն տվել ուրիշի, որ կովերի կաթը չպակասի [32, էջ 131]: Ընդհակառակը, ոմանք աշխատել են այդ ընթացքում հարևանից մերան կամ կաթ ստանալ, որպեսզի հարևանի կաթի *բարաքյաթն* էլ մերանի կամ կաթի հետ գա իրենց տուն: Հատկանշական է, որ որոշ տարածաշրջաններում (նաև Կովկասի այլ ժողովուրդներ) ոչ միայն տարվա այդ ժամանակահատվածում, այլև առհասարակ, *մերան փոխ չեն տվել*, որպեսզի *մալի* (խոշոր եղջերավոր անասունի) *բարաքյաթը* չկտրվեր [26, էջ 144: 24, էջեր 451-452: 22, էջ 273: 33, էջ 214]:

Արգելվում էր ուտել նույն օրվա մերած մածունը, *մերոցի* վրա պետք է գիշեր անցներ և միայն այն ժամանակ կարելի էր *կտրել*: Բանասացի համոզմամբ՝ մածունն առաջին օրը չեն *կտրում* ոչ թե որ դեռ պնդացած չէ, այլ որ տան *խերը, բարաքյաթը* կկորցնեն[Մարտիրոս 2023: 26, էջ 243]:

Մեր օրերում էլ որոշ տարածաշրջաններում *զարնանահավասարին*՝ մարտի 22-ին, և *ձմեռնահավասարին*՝ դեկտեմբերի 22-ին, *կաթ կամ մածուն տանից դուրս չեն հանում*, որ չսպառվեն: Զատկին կաթնեղեն և հատկապես մածուն չեն գործածում: Կաթը տաքացնելիս, հատկապես մայիսին, կրակը փչելով չեն հանգցրել՝ նաև մեղք համարելով: [Արծվանիստ 2019]: Կաթով լի դույլը մինչև վերջ չեն դատարկում. դույլի հատակին մի քիչ կաթ են թողնում, որ կաթը երբեք չսպառվի: Ամուսնալուծված կամ այրի կնոջը չի թույլատրվել կթել այն պատկերացմամբ, որ անասունի կաթը կցամաքի: [Նորաբաց 2023]: Համոզված են եղել՝ *կաթնուկ* ծաղիկը պոկողի տան կովի կաթը կպակասի [Աստղաձոր 2023]:

Զգոն են եղել հատկապես Համբարձման տոնին նախորդող գիշերը[7], քանզի անասունների կաթնատվությունը, կաթնամթերքի քանակությունն ավելացնելուն ուղղված այդ օրվա միջոցառումների մի մասն առանձնացել է չար դիտավորությամբ. միտված էր հարևանին վնասելուն, հարևանի անասունների կաթնատվությունը, կաթնամթերքի քանակությունը պակասեցնելուն՝ այն վստահությամբ, որ հարևանից պակասածը կավելացնի իրենցը. օրինակ՝ հարևանից *աթար* են գողացել և իրենց կաթի կաթսայի տակ վառել:

Կաթի և կաթնամթերքի ավելացմանն ուղղված հմայական միջոցներ

Մարդիկ մտահոգված են ոչ միայն կաթնամթերքի *բարաքյաթի* պահպանմամբ, այլև քանակի ավելացմամբ. կովը շատ կաթ տա, կաթնատվությունը երկար տևի, կաթի յուղայնությունը մեծ լինի, յուղի քանակն ավել լինի:

---

[7] *Օրինակ՝ կթանին* տարել են արածեցնելու, որ *լեպրար* կանայք չկախարդեն, իսկ եթե ներսում են թողել, երդիկների շուրջ թրիք են դարսել, մասրենու, ծիրանենու ճյուղեր են խրել դռան արանքներում, որ *կախարդանքը ներս չմտնի* [4, էջ 67: 16, էջ 243: 2, էջ 70]:

Հատուկ հոգատարությամբ, սիրով ու ջերմությամբ է կատարվել կենդանիների խնամքը: Կովերին, գոմեշներին, անգամ առատ կաթ տվող այծերին փաղաքշական անուններով են դիմել՝ Մարալ, Ծիրան, Սոնա, Սանամ, Ծաղիկ, Ջեյրան, Նազան, Նարգիզ և այլն: Հայոց մեջ ընդունված է եղել զրուցել լծկանի ու կովի հետ, սիրաշահել նրանց՝ փորձելով վայելել նրանց բարյացակամությունը: Իզուր չէ, որ նույնիսկ թևավոր խոսքն է զգուշացնում՝ «Կովին մի խրտնեցրու, կաթ չի տա» [29, էջ 368]: Առավել սիրալիր են եղել տոն օրերին: Վարդավառին հոտաղները ծաղկեփնջեր են կապել հորթերի և կովերի վզից: Նոր տարվա առավոտյան կենդանիներին էլ են շնորհավորել, կրակի մեջ մտցրած ճյուղերով նրանց թեթև շփել են, *Տարեհացի* խմորից թխվածքներ կախել վզից [28, էջ 55]: Այնուամենայնիվ, եթե վերոնշյալ միջոցները չեն օգնում, և նոր ծնած կովը դառնում է անհնազանդ՝ թույլ չի տալիս կթել, մեր օրերում էլ ավանակի մազը հարդի հետ տալիս են կովին՝ ուտելու, նավթի մեջ թաթախած կապույտ կտորը վառում են կովի *մռութի* մոտ, որ կովը խելոքանա [Արծվանիստ 2019: Եղիպատրուշ 2023]:

Կենդանիներին վտանգից հեռու պահելու, կաթի և կաթնամթերքի առատությունն ապահովելու համար ընդունված է եղել տարվա ընթացքում մի քանի անգամ *մատաղ անել:*

Նոր ծնած կովի առաջին օրվա կաթը եփել են առանց շարժելու և առանց շերեփով խառնելու[19, էջեր 152, 153]: Տերնդեզի կրակի մոխրից շաղ են տվել գոմում՝ Շիրակում նաև բարձրաձայնելով. «…մեր կովերն էլ ճըռթան էղնին (շատ կաթ տան)» [27, էջ 265]: Տերընդեզի հրավառ *խանձողերը* տանիքից նետել են գոմի ուղղությամբ՝ «կաթը *ցուլան* (առատ) լինի» կանչելով [8, էջ 69], դրանք պահել են՝ Զատկին կաթ եփելու համար [20, էջ 70: 19, էջ 153]**:** Նմանողական հմայությամբ կովի ընկերքը (*սրբանք, ծին*) մոտակա առվի մեջ են գցել, որ կովի կաթը առվի ջրի նման առատ լինի [9, էջ 232][8]:

Կովերի առաջին կիթը երեք անգամ թափել են մսուրքի մեջ՝ ամեն անգամ լցնելիս կրկնելով. «Կովիս կաթը *սելի* (հեղեղ) պես *բոլ* (առատ) էլլի» [10, էջ 147]: Օրհնած յուղը քսել են կովի պտուկներին, որ առատ կաթ տա[19, էջ 272]:

Բասենում *իշակաթնուկ,* Վասպուրականում՝ *կաթնուկ* բույսը (կարծում ենք՝ կաթ -կաթնուկ նմանողական հմայությամբ) դրել են կովերի և ոչխարների մեջքին, որ առատ կաթ ունենան,Վասպուրականում այս միջոցին դիմել են՝ ոչխարն օրական երկու անգամ կթել սկսելիս, Նոր Բայազետում նույն հույսով տանտիկինները իրենց գրպաններում պահել են օձի գլուխ կամ գայլի վեգ [22, էջ 266: 17, էջ 4: 15, էջ 110: 32, էջ 131]: Նմանողական հմայությամբ էր պայմանավորված երբեմն-երբեմն առատաձեռն լինելը՝ ակնկալելով կաթնատնտեսությունը հովանավորող ոգիների (որոնց էլ հնում, կարծում ենք, հենց նվիրված է եղել Կաթնապրի (Համբարձման) տոնի) առատաձեռնությունը. օրինակ՝ Համբարձման տոնի օրվա ամբողջ կաթը, մածունը, կաթնապուրը բաժանել են աղքատներին[19, էջեր 152-153: 6, էջ 85]: Կարծում ենք՝ Համբարձման կաթնապուրը դաշ-

[8] Ըստ ավանդազրույցի՝ երբ խնոցու մեջ առվի ջուր են լցրել, առատ կարագ են ստացել: Նկատել են, որ առվի մոտ մացառի ճյուղից վայրի այծի ընկերք է կախված, բերել-կախել են խնոցու վերևի գերանից: Երբ դրացիները գողացել են այն, կարագը նվազել է [9, էջ 232]: Ժողովրդի համոզմամբ՝ եթե նոր ծնած կովն ուտի ընկերքը, կովի կաթն անմիջապես կպակասի [Արծվանիստ 2019]:

տերում շաղ տալը ևս զոհաբերության դրսևորում է՝ ոչ միայն հատիկի, այլ նաև կաթի և կաթնամթերքի առատությունն ապահովելու ակնկալիքով:

Որպեսզի կաթը միշտ առատ լիներ, Համբարձման օրը կաթի մեջ լցրել են խոտերի վրայի այդ օրը հավաքած առավոտյան ցողը, նորահարսների՝ Մեծ պասի առաջին օրն առաջին անգամ ջրի գնալու ճանապարհի հետդարձին հավաքած *դովլաթի չոփերը*, կաթի կաթսայի տակ վառել են այդ օրը յոթ բակից ծածուկ և լուռ հավաքած չոփերը, Մեծ Պասին թխած յոթ *փթիրը* (գաթի ձևով *քակորը*՝ անասունի չորացած աղբը), Համբարձման կաթնապուրը, խառնելով ջրին, խմեցրել են կաթնատու անասուններին: Բասենցիները շրջակա գետերի ջրերից ցանել են կովերի վրա. կարծում ենք՝ ոչ միայն սրբացված ջրերի բուժիչ զորության հանդեպ հավատով, այլև որպես նմանողական հմայություն, քանզի այդ գետերի ջրերը կաթնագույն էին[14, էջ 259: 20, էջ 111: 15, էջ 110: 22, էջեր 260, 261: Տե՛ս ծանոթ. 1] :

Կաթնատնմտեսությանն առնչվող այլ հավատալիքներ

Հայոց ավանդական մշակույթում որոշ դեպքերում կանանց արգելվել է ինչ-ինչ գործերով զբաղվելը, օրինակ՝ դաշտանի ժամանակ կով կթել [13, էջ 362][9]: Մինչև նորածնի մկրտությունը տատմերը համարվել է *հարամ*, ձեռք չպետք է տար այն ուտելիքներին, որոնք ընդհանուր ընտանիքի անդամների համար էին՝ կարագ հավաքեր, հորելու համար պատրաստվող *ժաժիկը* կամ պանիրը սեղմեր պուտուկների մեջ և այլն [3, էջ 73]:

Հասարակական կենցաղում, համայնքի ներսում, ընտանիքում, տնտեսական և այլ բնույթի հարաբերություններում ավանդաբար գերակա նշանակություն է ունեցել պարզ, արդար ու ազնիվ վարվելակերպը: Բոլոր տեսակի շեղումներն ու խախտումները ոչ միայն դատապարտելի էին, այլև վտանգավոր. մեղք են համարվել: Կեղծիքի դեպքում կզրկվեին ապրուստից: Օրինակ՝ օտարականին կաթնամթերք վաճառելը անընդունելի է եղել. կենդանու կաթը կցամաքեր [11, էջ 57][10]: Կաթին ջուր խառնելը նույնպես մեղք է համարվել. կովերը *կաթից կկտրեին* [22, էջ 273][11]:

Ժողովրդական պատկերացումներում դրսևորվում են նաև կաթնատնտեսությանն առնչվող նախանշանային ուշագրավ հավատալիքներ. եթե չամուսնացած աղջիկը կամ տղան կաթի *տկուցքը* (կաթսային կպած-այրվածը) քերի, հարսանիքի օրը ձյուն կգա, կամ *կովը կթիմ, ճռղ տվեց(*ցայտեց*), դոնաղ կիկա* [12, էջ 236: 23, էջ 197]:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Կռահելով կամ չկռահելով *չարի* աղբյուրը՝ հայոց կաթնատնտեսության մեջ կիրառվել և կիրառվում են ոչ միայն *չարը* կանխարգելող, այլև

---

[9] Հայոց որոշ տարածաշրջաններում կանայք ոչխար չեն կթում. ըստ բանասացի՝ պատճառը ոչ թե սնահավատությունն է, այլ որ ոչխար կթելը դժվար է [Կոոր 2024]: Նկատենք, որ Կովկասի ժողովուրդներից միայն հայերն ու դարաչայերն են, որոնց մեջ կանայք ոչխար են կթում: Ուշագրավ է նաև, որ հայոց մեջ տղամարդուն արգելված չէ կաթ, կաթնամթերք վաճառելը՝ ի տարբերություն Կովկասի որոշ ժողովուրդների (նրանց թույլատրվում է միայն պանիր և յուղ վաճառելը) [34, էջ 203]:

[10] Հայաստանի տարբեր պատմազգագրական շրջաններում բազմաթիվ ավանդազրույցներ կան կաթ խնդրող և մերժում ստացող աղքատի, քար դարձած հովվի ու հոտի մասին: [Տե՛ս, օրինակ՝ 18, էջ 197]:

[11] Ժողովրդի պատկերացումներում մեղք համարվող նմանատիպ խախտումներին անդրադարձել ենք հայոց կաթնատնտեսության մշակույթում համագործակցության դասական դրսևորմանը՝ *Խաբուխազին* նվիրված հոդվածում: Մեր կարծիքով՝ «Կեսօրին կաթ բերողի երեսը մի տենա» առածը [25, էջ 296] գուցե նույնպես զգուշացում է անազնիվ արարքի մասին, անազնիվ մարդուց հեռու պահելու միտումով:

չարի՝ արդեն պատճառած վնասը չեզոքացնելուն, դրանից ազատվելուն ուղղված տարաբնույթ միջոցներ: Կիրառվող միջոցներն առավելագույնին են հասել հատկապես Համբարձման տոնի օրը և նախորդող գիշերը: Միջոցների մի մասն ուղղված է կաթի և կաթնամթերքի առատության ու լիության պահպանմանը, մի մասը՝ ավելացմանը: Կաթնատնտեսության հետ կապված հայոց հավատալիքներում դրսևորվել են մթության մեջ չար ոգիների առավել աշխուժացման, նոր ծնածի՝ չարից առավել վտանգված լինելու, կրակի, մոխրի, փշի, երկաթի վնասազերծող զորության մասին ժողովրդական պատկերացումները:

Կարծում ենք՝ լավ կլիներ, որ *չար աչքի* մասին ժողովրդի մեջ մինչ օրս ամուր պահպանված պատկերացման և նմանատիպ հավատալիքների փոխարեն ավանդույթի ուժով փոխանցված լիներ շեղումների և խախտումների հետ կապված մեղքի զգացումը. այդ պարագայում գուցե մեր օրերում հայ մարդը կաթին, կաթնամթերքին չէր խառնի ջուր, բուսական (օրինակ՝արմավի յուղ) կամ անհասկանալի բաղադրիչներ:

Գ ր ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն

1. **Աճառյան Հ**. «*Թուրքերէնէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ*» // Էմինյան ազգագրական ժողովածու(ԷԱԺ), Գ: Մոսկ.-Վաղրշպտ., Էջմիածնի վանքի տպ.: 1902, 58-377 էջ:
2. **Ահարոնյան Ա**. «*ՀՌՕ կինը*: Երկերի ժողովածու, Գ»: Թեհրան, Արմէն հրատ.: 1982: 408 էջ:
3. **Ավագյան Ս.** «*Արճակ*» // Հայ ազգագրություն և բանահյուսություն(ՀԱԲ), Հ. 8: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1978, 186 էջ:
4. **Բենսէ** «*Բուլանդխ կամ Հարք գաւառ*» // Ազգագրական հանդես(ԱՀ), Զ: Թիֆլիս, Մ. Ռուսինեանցի տպ.: 1900, 7-108 էջ:
5. **Գյոզալան Գ.** «*Մուսա լեռան ազգագրությունը*»: Երևան, «Գիտություն: 2001, 280 էջ:
6. **Գևորգյան Գ.** «*Աշտարակի ազգագրական նյութերը*»: ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի (ՀԱԻ) արխ., Գևորգյան Գ. ֆ., գ. 1: 1972, 99 թ. **Գևորգյան Գ**. «*Ղզլար*» // ՀԱԲ, 10: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1980, 139 էջ:
7. **Դաշտենց Խ**. «*Ռանչպարների կանչը*»: Երևան, «Սովետական գրող» հրատ.: 1979, 524 էջ:
8. **Թեմուրճյան Վ.** «*Անասնապահությունը Հայաստանում*»: ՀԱԻ-ի արխ., Թեմուրճյան Վ. ֆ., գ. 3: 1956, 475 թ.:
9. **Թոռլաքյան Հ**. «*Համշենահայերի ազգագրությունը*»//ՀԱԲ, Հ.13: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1981, 154 էջ:
10. **Թումանյան Հ.** «*Երկաթուղու շինությունը*»: ԵԼԺ, հ. 5: Երևան, ՀՀ ԳԱ հրատ: 1994, 831 էջ:
11. **Լալայան Ե**. «*Բորչալուի գավառ*: Երկեր, 3»: Երևան, «Գիտություն» հրատ.: 2004, 384 էջ:
12. **Լալայան Ե.** «*Գանձակի գավառ*: Երկեր, 2»: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1988, 203-474էջեր:
13. **Լալայան Ե.** «*Սիսական*» // ԱՀ, Գ: Թիֆլիս, Մ. Ռուսինեանցի տպ.: 1898, 105-272 էջեր:
14. **Լալայան Ե**. «*Նոր-Բայազէտի գավառ*» // ԱՀ, XVII: Թիֆլիս, Ն. Աղանեան տպ.: 1908, 86-125 էջեր:
15. **Լալայան Ե.** «*Ջավախք*: Երկեր, 1»: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1983, 457 էջ:
16. **Լալայան Ե.** «*Վասապուրական*» // ԱՀ, Հ.25: Թիֆլիս, Ն. Աղանեան տպ.: 1913, 21-60 էջեր:
17. **Լալայան Ե.** «*Վասպուրական* // ԱՀ, 26: Թիֆլիս, Սլօվօ տպ.: 1916: 195-210 էջեր:
18. **Լիսիցյան Ս**. «*Լեռնային Ղարաբաղի հայերը*» // ՀԱԲ, 12: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ: 1981, էջ 9-84:
19. **Լիսիցյան Ս**. «*Զանգեզուրի հայերը*»: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1969: 334 էջ:
20. **Խեմչյան Է.** «*Տավուշ*» // ՀԱԲ, 21: Երևան, «Գիտություն»: 2000: 314 էջ:
21. **Հակոբյան Գ.** «*Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը*»: Երևան, «Հայաստան»: 1974: 460 էջ:
22. «*Հայ շինականի աշխատանքի երգեր*»: Կազմ. և խմբ. Ա. Ղանալանյան: Երևան, Պատմության և գրականության ինստիտուտ: 1937: 265 էջ:
23. **Հովսեփյան Հ.** «*Ղարաղաղի հայերը, I, Ազգագրություն:* Երևան, «Գիտություն»: 2009, 501 էջ:
24. **Ղանալանյան Ա**. «*Առածանի*»: Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.: 1960: 398 էջ:

25. **Միքայելյան Գ.** «*Նոր Բայազետ*» // ՀԱԲ, 11: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1980: 165 էջ:
26. **Մխիթարէանց Աղ**. «*Փշրանք Շիրակի ամբարներից*» // ԷԱԺ, Ա, Մ.-Ալէքպօլ, Գ. Սանոյեանի տպ.: 1901: 1-338 էջեր:
27. **Մուրադեանց Յ**. «*Հայշենցի հայեր*» // ԱՀ, Զ: Թիֆլիս, Մ. Ռուսինեանցի տպ.: 1900: 109-158 էջեր:
28. **Չոլաքյան Հ** . «*Քեսապ*», Բ: Հալէպ, Արմէն Գասպարեան տպ.: 1998: 568 էջ:
29. **Պետոյան Վ.** «*Սասնա ազգագրությունը*»: Երևան, ԵՀ հրատ.: 1965, 550 էջ:
30. **Պետոյան Վ**. «*Սասուն*», Երևան: «Նախաբեմ»: 2016: 739 էջ :
31. **Քաջբերունի** «*Հայկական սովորություններ*» // ԱՀ VII-VIII: Թիֆլիս, Ն. Ռուսինեանցի տպ.: 1901: 113-204 էջեր:
32. **Калоев Б**. "*Скотоводство народов Северного Кавказа*". М., "Наука". 1993, 231 с.
33. **Лугуев С**. "*Культура поведения и этикет дагестанцев*". Махачкала, ИИАЭ ДНЦ РАН. 2006,304с.
34. **Марутян А.** "*Интерьер армянского народного жилища (вторая половина XIX –начало XX в.)* " // ՀԱԲ, 17: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1989: 65-142 էջեր:
35. **Мкртумян Ю**. "*Формы скотоводства в Восточной Армении (вторая половина XIX-начало XXв.)*» // ՀԱԲ, 6: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1974, 7-90 էջեր:

References

1. **Acharyan H**. "Words Borrowed from the Turkish in the Armenian [*T'urk'erene p'okhareal barer hayerēni mēj]*» // Eminean Ethnographic Collection(EEC),G, Moscow-Vagharshapat. 1902, 58-377 pp. (in Armenian)
2. **Aharonyan A.** "HRO Woman" [*HRŌ kinĕ*], Collection of Works, G, Tehran, Armen. 1982, 408 p. (in Armenian)
3. **Avagyan S.** "Archak" [*Archak*] //Armenian Ethnography and Folklore (AEF), 8. Yerevan, AS ASSR. 1978, 186 p. (in Armenian)
4. **Bense** "Bulankh or Hark' Region" [*Bulankh kam Hark' gavar*]//Ethnographic Journal (EJ), Z. T'iflis. 1900, 7-108 pp. (in Armenian)
5. **Gyozalyan G.** "Ethnography of Musa Mount" [*Musa leran azgagrut'yunĕ*]. Yerevan. Gitut'yun. 2001, 280 p. (in Armenian)
6. **Gevorgyan G.** "Ethnographic Materials of Ashtarak" [*Ashtaraki azgagrakan nyut'erĕ*]. arch. of Institute of archaeology and ethnography (IAE), Gevorgyan G. f., w. 1. 1972, 99 p. (in Armenian)
7. **Dashtents Kh.** "The Call of the Peasants" [*Ranch'parneri kanch'ĕ*]. Yerevan, Sovetakan grogh. 1979, 524 p. (in Armenian)
8. **Temurchyan V.** "Cattle Breading in Armenia"[*Anasnapahut'yunĕ Hayastanum*]. Arch. of IAE, T'emurchyan V. f., w. 1. 1956, 475 p. (in Armenian)
9. **Torlakyan H.** "Ethnography of Hamshen-Armenians" [*Hamshenahayeri azgagrut'yunĕ*]// AEF, 13, Yerevan, AS ASSR Publ.. 1981, 154 p. (in Armenian)
10. **Tumanyan H.** "Railway Construction" [*Erkat'ughu shinut'yunĕ*]. Yerevan, AS RA Publ.. 1994, 831 p. (in Armenian)
11. **Lalayan E.** "Borch'alu Region" [*Borchalui gavar*].Works, 3, Yerevan, "Gitut'yun". 2004, 384p. (in Armenian)
12. **Lalayan E.** "G andzak Region" [*Gandzaki gavar*].Works, 2, Yerevan, NA ASSR Publ.. 1988, 506 p. (in Armenian)
13. **Lalayan E.** " Sisean" [*Sisean*]// EJ, G, T'iflis. 1898, 105-272 pp. (in Armenian)
14. **Lalayan E**. "New-Bayazēt Region" [Nor-Bayazēti gavar] // EJ, XVII, T'iflis. 1908, 86-125 pp. (in Armenian)
15. **Lalayan E.** "Javakhk'" [*Javakhk'*]. Works, 1, Yerevan, NA ASSR Publ.. 1983, 457 p. (in Armenian)
16. **Lalayan E.** "Vaspurakan" [*Vaspurakan*] // EJ, 25, T'iflis. 1913, 21-60 pp.. (in Armenian)
17. **Lalayan E.** "Vaspurakan" [*Vaspurakan*] // EJ, 26, T'iflis. 1916, 195-210 pp.. (in Armenian)
18. **Lisitsyan S.** "The Armenians of Moauntain Gharabagh" [*Lernayin Gharabaghi hayerĕ*] // AEF, 12, Yerevan, AS ASSR Publ.. 1981, 9-84 pp. (in Armenian)
19. **Lisitsyan S.** "The Armenians of Zangezur" [*Zangezuri hayerĕ*]. Yerevan, AS ASSR publ.. 1969, 334 p. (in Armenian)

20. **Khemchyan E.** "Tavush" [*Tavush*] // AEF, 21, Yerevan, "Gitut'yun"Publ.. 2000, 314 p. (in Armenian)
21. **Hakobyan G.** "Ethnography and Folklore of Lower Basen"[*Nerk'in Baseni azgagrut'yunĕ ew banahyusut'yunĕ*]. Yerevan, "Hayastan" Publ.. 1974, 460 p. (in Armenian)
22. "Work Songs of Armenian Peasant" [*Hay shinakani ashkhatank'i erger*].Edited by A. Ghanalanyan. Yerevan, IHL. 1937, 265 p. (in Armenian)
23. **Hovsepyan H.** "The Armenians of Gharadagh" [*Gharadaghi hayerĕ*], I, Ethnography. Yerevan, "Gitut'yun" Publ. 2009, 501 p. (in Armenian)
24. **Ghanalanyan A**. "Proverbs" [*Aratsani*], Yerevan, AS ASSR Publ.. 1960, 398 p. (in Armenian)
25. **Mikayelyan G.** "New-Bayazēt" [Nor-Bayazēt]//AEF, 11, Yerevan, NA ASSR Publ.1980,165 p. (in Armenian).
26. **Mkhitareants A.** "Crumb from the Barns of Shirak" [P'shrank' Shiraki ambarnerits']// EEC, A, Moscow-Alek'pol. 1901, 1-338 pp. (in Armenian)
27. **Muradeants Y.** "The Armenians of Hamshen" [Hamshents'i hayer]// EJ, Z, T'iflis. 1900, 109-158 pp. (in Armenian)
28. **Cholakyan H.** "Kesap" [*K'esap*], B. Aleppo, Armen Gasparean. 1998, 568 p. (in Armenian)
29. **Petoyan V.** "Ethnography of Sasun" [*Sasna azgagrutyunĕ*]. Yerevan, YU Publ.. 1965, 550 p. (in Armenian)
30. **Petoyan V.** "Sasun" [*Sasun*]. Yerevan, "Nakhabem" Publ.. 2016, 739 p. (in Armenian)
31. **Kajberuni** "Armenian Customs" [*Haykakan sovorut'yunner*] // EJ, VII-VIII, T'iflis. 1901, 113-204 pp. (in Armenian)
32. **Kaloev B.** "Cattle Breading of the North Caucasus' Peoples" [*Skotovodstvo narodov Severnogo Kavkaza*]. Moscow, "Nauka" Publ.. 1993, 231 p. (in Russian)
33. **Luguev S.** "Behavioural Culture and Etiquette of Daghestan Peoples" [*Kul'tura povedenija i etiket dagestancev*]. Makhachkala, IHAE DNC ASR. 2006, 304 p. (in Russian)
34. **Marutyan H.** "Interior of Armenian Dwelling (the Secund Half of the XIX-the Beginning of the XX c.)" [*Inter'er armjanskogo narodnogo zhilish'a (vtoraja polovina XIX-nachalo XX v.)*] // AEF, 17, Yerevan, AS ASSR Publ. 1989, 65-142 pp. (in Russian)
35. **Mkrtumyan Ju.** ".Cattle Breading Forms in East Armenia (the Secund Half of the XIX-the Beginning of the XX c.)" [*Formy skotovodstva v Vostochnoj Armenii (vtoraja polovina XIX-nachalo XX v.)*] // AEF, 6, Yerevan, AS ASSR Publ. 1974, 7-90 pp. (in Russian)

Ընդունվել է / Received on: **21. 03. 2025**
Գրախոսվել է / Reviewed on: **21. 04. 2025**
Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **23. 05. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին
Հասմիկ Թելմանի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՝ պատմ. գիտ. թեկնածու,
Երևանի պետական համալսարանի դոցենտ, Երևան, ՀՀ
էլ. հասցե՝ h.harutyunyan@ysu.am, // orcid.org0009-0003-3736-851

Hasmik Telman HARUTYUNYAN: PhD in History,
Associate Professor at Yerevan State University,Yerevan, RA,
e-mail: h.harutyunyan@ysu.am // orcid.org0009-0003-3736-8511